Պետական ծառայությունների մատուցում համայնքապետարաններում

01.08.2022թ.-ի դրությամբ

Կարևորելով պետական ծառայությունները բնակչությանը հնարավորինս մոտեցնելու հրամայականը՝ ՏԿԵՆ-ի և ՀՀ արդարադատության նախարարության համատեղ նախաձեռնությամբ, 2019թ.-ին փոփոխություններ կատարվեցին ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109 որոշման մեջ, որոնց արդյունքում ՔՍԳ ունեցող 40 համայնքներ ներառվեցին պետական ծառայություններ տրամադրող օպերատորների ցանկում:

Համաձայն այդ որոշման՝ վերոնշյալ համայնքների ՏԻՄ-երը պետք է ունենան կարողություններ մատուցելու առավել պահանջարկված մի շարք ծառայություններ, որոնք վերապահված են ստորև թվարկվող պետական մարմիններին.

- Իրավաբանական անձանց պետական ռեգիստր
- Անշարժ գույքի կադաստր
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցում (ՔԿԱԳ)
- Արտաքին գործերի նախարարություն
- ՀՀ ոստիկանություն
- Միգրացիոն ծառայություն:

Այսօր արդեն տասնմեկ համայնքապետարաններում (Աբովյան, Աշտարակ, Վանաձոր, Ջերմուկ, Ջրվեժ, Տեղ, Ապարան, Վայք, Բերդ, Մեղրի, Արենի) ապահովված է վերոնշյալ որոշման պահանջների կատարումը և ևս վեց համայնքներում այդ ուղղությամբ աշխատանքներն այս պահին ընթացքի մեջ են:

Սա նշանակում է, որ այդ համայնքների բնակիչները պետական այդ ծառայություններն ստանում են հենց իրենց համայնքում և ստիպված չեն այդ նպատակով մարզկենտրոն կամ Երևան հասնելու: Այդպիսի ծառայություններից են, օրինակ, իրավաբանական անձի, հասարակական կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը, անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրումը, փաստաթղթերի ապոստիլային վավերացումը, ընտանեկան կարգավիճակի, դատվածության, հետախուզման առկայության, փախստականի կարգավիճակ ունենալու մասին տեղեկանքի տրամադրումը, տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի փոխարեն նոր վկայականի տրամադրումը և այլն: